

h-42

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԼԻԹ ՄԻՇՆՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻՔԱՆԱՆՆ ԵՐԿՈՒ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ
(1958-1975ԹԹ.)

Է. 00.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ
սլաոնական գիտությունների ֆեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2002

ՇԿ-Ը

Ատենախոսության քեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Ն. Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Վ. Ա. Բայբուրդյան

պատմական գիտությունների բեկնածու՝
Ա. Ա. Փաշայան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2002թ. դեկտեմբերի 20-ին ժ. 14-ին ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող 006
մասնագիտական խորհրդում /հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան
պող., 24 գ/:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2002թ. նոյեմբերի 20-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

Մ. Կ. Բաղդասարյան

Արթուր Խ. Բաղդասարյան
Բաղդասարյան Մ. Կ. Բաղդասարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիբանանի 1958-1975թթ. քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների
ուսումնասիրությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական և գործնական
նշանակություն:

Լիբանանի նորագույն պատմության այս խիստ հակասական
ժամանակահատվածում մի կողմից նկատվում էր երկրի սոցիալ-տնտեսական ընդհանուր
առաջընթաց, քաղաքական իրադրության հանճատական հանգստություն, մյուս կողմից՝
1975թ. սկսված երկրորդ քաղաքացիական պատերազմի նախադրյալների ստեղծում: Ընդ
որում, մերքաղաքական կյանքում գնալով ավելի ու ավելի լուրջ հետք էին բողմում
տարածաշրջանային յրադարձություններն, որոնք, առանց չափազանցության, 1960-
ականների երկրորդ կեսին և 1970-ականներին, շատ դեպքերում ձեռք էին բերում
համաշխարհային նշանակություն՝ ինչպես 1967 և 1973 թվականների արաբա-իսրայելյան
պատերազմները, 1973թ. արաբա-իսրայելյան պատերազմի հետևանքով առաջացած
համաշխարհային էներգետիկ ճգնաժամը, մերձավորարևելյան հակամարտության մեջ
պաղեստինյան գործոնի դերի բարձրացումը և այլն:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ներլիբանանյան և տարածաշրջանային,
երբեմն նաև համաշխարհային զարգացումների լուսաբանումն արդիական է ոչ միայն
Լիբանանի այդ շրջանի պատմությունը, դրան հաջորդած տարիների զարգացումներն ու
երկրի ներկա իրավիճակը ճիշտ հասկանալու, այլև տարածաշրջանային գործընթացներն
ավելի համապարփակ ու խորը գնահատելու առումով:

Լիբանանի պատմությունը, երկրում տեղի ունեցող գործընթացներն ու ներկա
իրականությունը դժվար է ըմբռնել առանց երկրի կառավարման հիմքում դրված
կրոնադավանական համակարգի շատ հաճախ բացասական, բայց երբեմն նաև կարևոր
կարգավարող դերի լուսաբանման:

1958-1975թթ. Լիբանանի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ
ներքին ճգնաժամերը հաղթահարվում էին ոչ միայն նեղ համայնքային, այլև հաճախ նաև
համալիբանանյան ուժերով, ինչի վառ ապացույցն էին ամենատարբեր և անհավանական
քաղաքական դաշինքների կազմավորումն ու տարբեր կրոնական համայնքների ղեկավար
շրջանակների համագործակցությունը:

Թեմայի ուսումնասիրությունը նպատակ ունի նաև մերձավորարևելյան
հակամարտության որոշ ծայրերի առավել ընդգրկուն պատկերացմանն ու այդ

հակամարտության սրման արդյունքում Մերձավոր Արևելքի տարբեր պետություններում սովյալ ղեկավար Լիբանանում, խորացող հակասությունների ճիշտ ըմբռնմամբ:

Սույն թեմայի արդիականության հարցն ուղղակիորեն պայմանավորված է մերձավորարևելյան տարածաշրջանում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական կարևոր գործընկերոջ՝ Լիբանանի Հանրապետության, նորագույն պատմության, ներքին և արտաքին քաղաքականության ու տնտեսության զարգացման հանգուցային եիմնախնդիրների ուսումնասիրման կարևորությամբ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեման ընտրվել է 1958-1975թթ. Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի, նրա առանձնահատկությունների հետազոտման և դրանց ամբողջական բնութագրումից ելնելով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և այլ նյութերի հիման վրա մերկայացնել Լիբանանի սոցիալ-տնտեսական իրավիճակն ու 1958-1975թթ. քաղաքական զարգացումները:
- Հետազոտել 1958թ. Լիբանանում բռնկված քաղաքացիական առաջին պատերազմից հետո երկրում ստեղծված իրավիճակը:
- Դիտարկել Լիբանանի կրոնադավանական համակարգը, կրոնական համայնքները, դրանք մերկայացնող քաղաքական ուժերն ու կուսակցությունները, քաղաքայտել Ֆուադ Շիհարի (1958-1964թթ.) և Շարլ Հելուփ (1964-1970թթ.) նախագահության տարիներին Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները և բնույթը, ինչպես նաև դրանց վրա տարածաշրջանային զարգացումների ազդեցությունը:
- Բացահայտել Լիբանանի ներքաղաքական կյանքում պաղեստինյան գործռնի ակտիվացման պատճառները (1960-ականների վերջ և 1970-ականների սկիզբ) և լիբանանյան կառավարության ու Պաղեստինի Ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) միջև հարաբերությունները:
- Հետազոտել 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» դեպքերից հետո Լիբանանի ՊԱԿ-ի և նրա գինված խմբավորումների գլխավոր հենասյուն դառնալու հետևանքները և դրա արդյունքում լիբանանյան հասարկության երկփեղկումն ու երկրում ներքաղաքական ճգնաժամի սրումը:

- Քննարկել 1973-1975թթ. Լիբանանում պաղեստինցիների լուրջ քաղաքական գործոն դառնալու գործընթացն ու 1975թ. սկսված երկրորդ քաղաքացիական պատերազմի բռնկման նախադրյալներն ու պատճառները:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման՝ Լիբանանը երկու քաղաքացիական պատերազմների միջև (1958-1975թթ.), ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի դարձել հատուկ ուսումնասիրության առարկա: Թեև Լիբանանի պատմության և Լիբանանում տեղի ունեցած գործընթացների, ներքաղաքական զարգացումների որոշ ասպեկտներ քննարկվել են հայ և օտարազգի հեղինակների կողմից, սակայն ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լիբանանի քաղաքական պատմության ամբողջական ուսումնասիրությունը դեռևս չի ներկայացվել առանձին աշխատանքով:

Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքագիտության ոլորտի մասնագետները սովորաբար իրենց ուսումնասիրություններում առաջնահերթությունը տվել են 1939-1958թթ. Լիբանանում ազգային-ազատագրական պայքարի, 1958թ. Լիբանանում բռնկված առաջին քաղաքացիական և 1975թ. բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմների լուսաբանմանը և դրանց գիտական քննությանը:

Ներկա աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ համակողմանի վերլուծության են ենթարկվում 1958-1975թթ. Լիբանանի քաղաքական իրադարձությունները, դրանց զարգացման փուլերն, ընթացքն ու օրինաչափությունները:

Գիտական նորույթ է ատենախոսության էջերում 1960-ականների վերջին և 1970-ականների կեսերին Լիբանանում պաղեստինյան ռազմա-քաղաքական կառույցների ներկայության և նրանց ներքաղաքական լուրջ գործոն դառնալու ու դրա հետևանքով լիբանանյան ներքին հակասությունների սրման, երկրի հասարակության երկփեղկման խորացման և 1975թ. Լիբանանում սկսված երկրորդ քաղաքացիական պատերազմի բռնկման պատճառների քննությունը:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1958-1975թթ. ժամանակահատվածը՝ 1958թ. Լիբանանում բռնկված առաջին քաղաքացիական

պատերազմից մինչև 1975թ. բռնկված երկրորդ քաղաքացիական պատերազմի միջև ընկած ժամանակաշրջանը:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են 1958-1975թթ. Լիբանանի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակի, կրոնադավանական համակարգով պայմանավորված խնդիրների, տարածաշրջանային իրադարձությունների հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքները:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, արված մեկնաբանությունները և եզրահանգումները կարող են օգտագործվել Լիբանանում և առիասարակ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում քաղաքական գործընթացների, սոյալ ժամանակաշրջանի քաղաքականության պատմության հիմնախնդիրներին մվիրված ուսումնասիրություններում և դասախոսություններում: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել քաղաքացիական հետազոտություններում և պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև ծառայել Լիբանանի և մերձավորարևելյան տարածաշրջանի այլ երկրների և քաղաքական գործընթացների նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական մոտեցումների ճշգրտմանը:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում, նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում և թեզերում՝ Երիտասարդ արևելագետների համրապետական XXI, XXII, XXIII և Երևանի ՎՔբյուտոփ անվան օտար լեզուների պետական համալսարանում կայացած գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

Հեղինակի հրատարակած հիմնադրույթների ու հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հայ և օտարազգի հետազոտողների քննարկվող թեմային մվիրված արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հուշերը, հայտարարություններն ու պարբերականները:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են Լիբանանի Հանրապետության սահմանադրությունը¹, Լիբանանի կառավարության պաշտոնական վիճակագրական տվյալները, Լիբանանի Հանրապետության Զարգացման և Ծրագրավորման նախարարության տարբեր բյուլետեններն ու տեղեկատուները², որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Լիբանանի տնտեսության տարբեր ոլորտների զարգացման ծրագրերի վերաբերյալ, Միավորված Ազգերի կազմակերպության նյութերը՝ ՄԱԿ-ի տարեգրքերը, Միջին Արևելքի տնտեսական զարգացմանը մվիրված բյուլետենները³, Իսրայելի կառավարության պաշտոնական հրատարակումները⁴, պաղեստինյան հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի պաշտոնական հրատարակումները⁵, Պաղեստինի վերաբերող Միջազգային փաստաթղթերի ժողովածուն⁶, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի՝ մերձավորարևելյան տարածաշրջանին առնչվող բյուլետենները⁷, ԽՍՀՄ կառավարության արաբական երկրներին առնչվող փաստաթղթերի և նյութերի ժողովածուն⁸:

Մյուս կարևոր աղբյուրը լիբանանյան և արաբական զանազան պարբերականներն են, որոնցից հարկ է նշել արաբալեզու «ան-Նահարը», «ալ-Սիրարը», «ան-Նիդան», «ալ-Ախրարը», «աս-Սաֆիրը», «ալ-Մուհարիթը», «ալ-Մաալումաթը», «ալ-Ահրամը», «ալ-Բասաթը», «աս-Սաուրան», ֆրանսալեզու «Լը Ժուրը», «Լ'Օրիանը», «Լը Կոմմերս դյու

¹ Конституция государства Ближнего и Среднего Востока, "Конституция Ливанской Республики". М., 1956.

² Republic of Lebanon, Council for Development and Reconstruction, Beirut, 1994; Republic of Lebanon, Ministry of General Planning, The Six Year Development Plan (1962-1967), Beirut, 1961; Republic of Lebanon, Ministry of General Planning, The Six Year Development Plan (1972-1977), Beirut, 1971.

³ Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1967; Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1975; United Nations Studies on Selected Development Problems in Various Countries of the Middle East, UN Publications, New York, 1970; UN Economic Developments in the Middle East 1962-1967, UN Publications, New York, 1961, UN Economic Developments in the Middle East 1972-1975, New York, 1971, Industrial Development in the Arab Countries, United Nations Publication, New York, 1969.

⁴ Israel Digest XIII, May 29, 1970.

⁵ Палестинская проблема, Документы ООН международных организаций и конференций, М., 1984.

⁶ International Documents on Palestine, Beirut, 1970, International Documents on Palestine, Beirut, 1971.

⁷ Department of State Bulletin, LXII, 1650, 1970.

⁸ СССР и Арабские страны 1917-1960, Документы и материалы, М., 1961.

«Լեվանտը», «Լք Սուարը», ինչպես նաև՝ լիբանանահայ մամուլ՝ «Մեր նշանաբանն է հառաջ», «Ազգակ», «Արարատ» և այլն, ուր տեղ են գտել Լիբանանի նախագահների, կառավարությունների և պետական բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններն ու լիբանանյան տարբեր համաձայնագրեր՝ հստակ պատասխան մեկնաբանություններով:

Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև ՀՀ Հասարակական և քաղաքական կազմակերպությունների և փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՀԶՆՓԿՊԱ) նյութերը:

Ատենախոսության մեջ բարձրացվող տարբեր հարցերի լուսարանմանը մեծապես նպաստել է հայ արաբագետ Ն. Հովհաննիսյանի՝ Մերձավոր և Միջին Արևելքի, հատկապես, Լիբանանի պատմության տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող արժեքավոր աշխատություններն ու հոդվածները⁹:

Հարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումնասիրել է Մերձավոր Արևելքի, մասնավորապես արաբական երկրների պատմությունն ու արտաքին հարաբերություններին առնչվող հարցերը, ինչի օրինակ կարող են ծառայել Հ.Գրիգորյանի, Հ.Թովուզյանի, Շ.Կարամանուկյանի, Ռ.Կարապետյանի, Ա.Հովհաննիսյանի, Վ.Ջիջեյանի¹⁰ և այլոց մեկնագրություններն ու հոդվածները:

Հայցողի առջև կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են, մասնավորապես, խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության հարցերի վերաբերյալ տպագրված մեկնագրությունները, ժողովածուները և պարբերականները¹¹:

Խորհրդային հեղինակների շարքում հարկ է հիշատակել Վ.Վոլոնովի, Վ.Կատինի, Ե.Գ.Միրտիկի (նույն ինքը՝ Ե.Պիրլին), Գ.Նիկիտինայի, Ե.Մելնիկովի, Ս.Իվանովի,

⁹ Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982; Ն. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում 1939-1958թթ., Երևան, 1967; Ն. Հովհաննիսյան, Հ. Սարգսյան, Միջին արևելադարձի համար նդված պայքարում, Երևան, 1975; Ն. Օղաեսյան, Լիվանский конфликт и Армянская община Ливана, Советский опыт решения национального вопроса и его значение для народов Африки и Азии, Ереван, 1982; Ն. Օղաեսյան, Отнашения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985.

¹⁰ Գրաբանության, Արաբական պետությունների լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988; Ռ. Կարապետյան, Միջին-արևելյան հարաբերությունները 1967-1996, Երևան, 2000; Հ. Գրիգորյան, Միջին արևելադարձի համայնքային դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 14, Երևան, 1989; Ա. Հովհաննիսյան, ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ, Երևան, 2001; Հ. Ն. Թովուզյան, Միջին և Լիբանանի հայկական գաղթյալների պատմություն, Երևան, 1986; Վ. Ջիջեյան, Հայաստանը և Միջին Արևելքը, Տեղեկական համագործակցության հեղանակները Միջին և Լիբանանի հետ, Երևան 2001:

¹¹ Новейшая история арабских стран Азии, М., 1988; Ближний Восток и Международное право, М., 1982; ТАСС, Атлас: А. Кунин, Доктрина Эйзенхауэра, М., 1957; История дипломатии, Том V, Книга I, М., 1974; О. Туганова, Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960; Ю. Маргунов, Ю. Потекин, Арабо-турецкие отношения на современном этапе, 1946-1960, М., 1961; Э. Нир-Буаджа, Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966), М., 1978; Политика Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1966; А. Феденко, Ирак в борьбе за независимость (1917-1969), М., 1970; Межарабские конфликты в странах зарубежного Востока, М., 1991; Современный Ливан (Справочник), М., 1963; Политика США на Арабском Востоке, М., 1961; Арабский мир. Три десятилетия независимого развития, М., 1990.

¹² Вольфов, Ливанский дневник, М., 1980; В. Катин, Ливан: Экономика и внешняя торговля, М., 1961; Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986; Его же Палестинский узеь, М., 1978; Е. Пырлин, Ближневосточный лабиринт, М., 1996; Г. Никитина, Государство Израиль, М., 1968; Е. Мельников, Политический и государственный строй Ливана, М., 1976; А. Иванов, Межарабская политика Сирии, Том 1, М., 1986; А. Агарышева, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, М., 1983; Его же Ближний Восток: Терроризм и его прекривтели, М., 1986; Е. Ирмаков, История одного слова, М., 1985; Ե. Պիրնիկով, Մի լիգայությունների պատմություն, Երևան, 1987; Л. Дадаян, Государственный строй Ливана, М., 1973; И. Звягельская, Роль военной верхушки в формировании государственной политики Израиля, М., 1982; Р. Овчинников, Змгитати внешней политики США, от Никсона до Рейгана, М., 1986; В. Киселев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988; Е. Кармунов, Репортаж из взорванного рая, М., 1982; Н. Лифанов, Ливан, М., 1966; М. Радонов, марониты. Из этно-конфессиональной истории восточного средиземноморья, М., 1982; Н. Сергеев, С. Петров, Ливан, М., 1969.

¹³ www.ariga.com, www.palestine-info.net.

¹⁴ B. J. Odeh, Lebanon: Dynamics of Conflict, A Modern Political History, London, 1985; Sandre Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991; John Bulloch, Death of a Country. The Civil War in Lebanon, London, 1977; Patrick Seale, Asad. The Struggle for the Middle East, London, 1988; I. Rabinovich, The War for Lebanon 1970-1983, Cornell University Press, 1984; I. Rabinovich, H. Shaked, From June to October, The Middle East between 1967 and 1973, New Jersey, 1978; Georges Naccache, Un Rève Libanais 1943-1972, Ficher du Monde Arabe, 1983; L. M. T. Meo, Lebanon, Improbable Nation, Indiana University Press, 1965; Wade R. Gorla, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, Ithaca Press, 1985; Beate Hamzrach, The Emergence of the South Lebanon Security Belt: Major Haddad and the Ties with Israel, New York, 1988; Fahim I. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961; H. Kissinger, White House Years, Boston-Toronto, 1979; H. Kissinger, Years of Upheaval, Boston-Toronto, 1982; M.Kalb, B. Kalb, Kissinger, Boston-Toronto, 1974; Augustus Richard Norton, Amal and the Shi'a. Struggle for the Soul of Lebanon, USA, 1987; A. Dawisha, Syria and Lebanese Crisis, New York, 1980; Tabitha Petran, The Struggle over Lebanon, New York, 1987; Michael C. Hudson, The Precarious Republic: Political Modernization in Lebanon, New York, 1985; J. C. Hurewitz, Confessional Democracy, Lebanon, Middle East Politics: The Military Dimension, New York, 1969; J. Nantet, Histoire du Liban, Paris, 1963; Michal Johnson, Class and Client in Beirut: The Sunni Muslim Community 1840-1985, London, 1986; Francis Griblat, La Communauté Libanaise et le Mouvement National Palestinien 1967-1986, Paris, 1988; Jonathan C. Randal, Going all the Way: Christian War lords Israeli Adventures, and the War in Lebanon, New York, 1992. Нитре Кальвокорреси, Мировая политика после 1945 года, Книга 1, М., 2000.

¹⁵ Pierre Gemayel, Connaissance des Kataeb, Beyrouth, 1960.

¹⁶ Kamal Jounblatt, Pour le Liban, Editions Stock, 1978; Kamal Jounblatt, Démocratie Nouvelle, Beyrouth, 1987.

¹⁷ Կամալ Ջունբլատ, حقیقة الثورة اللبنانية, بیروت, ۱۹۸۸.

Ա.Ազարիչևի, Ե.Պիրնիկովի, Լ.Դադիանի, Ի.Չվյազբելկայայի, Պ.Օվիննիկովի, Վ.Կիսելևի, Ե.Կարլունովի, Ն.Լիխանովի, Մ.Ռադիոնովի, Ն.Մերյոզինի ու Մ.Պետրովի և այլոց ուսումնասիրություններն ու մեկնագրությունները, որոնք առնչվում են Մերձավոր Արևելքի ժողովուրդների և երկրների փոխհարաբերությունների խայտարղետ համակարգին, արաբա-իսրայելյան հակամարտության առանձին խնդիրներին և Լիբանանում տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած զարգացումներին¹²:

Արաբա-իսրայելյան հակամարտության հետազոտմանը, Լիբանանի պատմության առնչվող տարբեր խնդիրներին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատությունների շարքում անհրաժեշտ է նշել ինչպես տարբեր հետազոտական կենտրոններ¹³, այնպես էլ Բ.Օդեհի, Ս.Մաքեյի, Ջ.Բուլլոչի, Պ.Սիի, Ի.Ռաբինովիչի և Հ.Շեյքրի, Ջ.Նաքաշի, Լ.Մեոյի, Վ.Գորիայի, Ռ.Համիզրաչի, Հ.Քոբեյնի, Հ.Քիսիմզեյի, Մ.Զալբի և Բ.Բալբի, Ա.Նորթոնի, Ա.Դաուիչայի, Թ.Փեթրանի, Մ.Հադսոնի, Ջ.Հուրեկի, Ջ.Նանթերի, Մ.Ջոնսոնի, Ֆ.Գրիբլայի, Ջ.Ռանդալի, Պ. Կալվալորեսի և այլոց մեկնագրությունները, հոդվածներն ու հրատարակումները¹⁴:

Աշխատանքի մեջ հեղինակն օգտագործել է նաև Լիբանանի քաղաքական գործիչների՝ Պիեր Ժմայելի¹⁵, Կամալ Ջունբլատի¹⁶, Զարիմ Բազրասունուի¹⁷

1970; Межарабские конфликты в странах зарубежного Востока, М., 1991; Современный Ливан (Справочник), М., 1963; Политика США на Арабском Востоке, М., 1961; Арабский мир. Три десятилетия независимого развития, М., 1990.

¹² Вольфов, Ливанский дневник, М., 1980; В. Катин, Ливан: Экономика и внешняя торговля, М., 1961; Е. Дмитриев, Палестинская трагедия, М., 1986; Его же Палестинский узеь, М., 1978; Е. Пырлин, Ближневосточный лабиринт, М., 1996; Г. Никитина, Государство Израиль, М., 1968; Е. Мельников, Политический и государственный строй Ливана, М., 1976; А. Иванов, Межарабская политика Сирии, Том 1, М., 1986; А. Агарышева, От Кэмп-Дэвида к трагедии Ливана, М., 1983; Его же Ближний Восток: Терроризм и его прекривтели, М., 1986; Е. Ирмаков, История одного слова, М., 1985; Ե. Պիրնիկով, Մի լիգայությունների պատմություն, Երևան, 1987; Л. Дадаян, Государственный строй Ливана, М., 1973; И. Звягельская, Роль военной верхушки в формировании государственной политики Израиля, М., 1982; Р. Овчинников, Змгитати внешней политики США, от Никсона до Рейгана, М., 1986; В. Киселев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988; Е. Кармунов, Репортаж из взорванного рая, М., 1982; Н. Лифанов, Ливан, М., 1966; М. Радонов, марониты. Из этно-конфессиональной истории восточного средиземноморья, М., 1982; Н. Сергеев, С. Петров, Ливан, М., 1969.

¹³ www.ariga.com, www.palestine-info.net.

¹⁴ B. J. Odeh, Lebanon: Dynamics of Conflict, A Modern Political History, London, 1985; Sandre Mackey, Lebanon: Death of a Nation, New York, 1991; John Bulloch, Death of a Country. The Civil War in Lebanon, London, 1977; Patrick Seale, Asad. The Struggle for the Middle East, London, 1988; I. Rabinovich, The War for Lebanon 1970-1983, Cornell University Press, 1984; I. Rabinovich, H. Shaked, From June to October, The Middle East between 1967 and 1973, New Jersey, 1978; Georges Naccache, Un Rève Libanais 1943-1972, Ficher du Monde Arabe, 1983; L. M. T. Meo, Lebanon, Improbable Nation, Indiana University Press, 1965; Wade R. Gorla, Sovereignty and Leadership in Lebanon 1943-1976, Ithaca Press, 1985; Beate Hamzrach, The Emergence of the South Lebanon Security Belt: Major Haddad and the Ties with Israel, New York, 1988; Fahim I. Qubain, Crisis in Lebanon, Washington, 1961; H. Kissinger, White House Years, Boston-Toronto, 1979; H. Kissinger, Years of Upheaval, Boston-Toronto, 1982; M.Kalb, B. Kalb, Kissinger, Boston-Toronto, 1974; Augustus Richard Norton, Amal and the Shi'a. Struggle for the Soul of Lebanon, USA, 1987; A. Dawisha, Syria and Lebanese Crisis, New York, 1980; Tabitha Petran, The Struggle over Lebanon, New York, 1987; Michael C. Hudson, The Precarious Republic: Political Modernization in Lebanon, New York, 1985; J. C. Hurewitz, Confessional Democracy, Lebanon, Middle East Politics: The Military Dimension, New York, 1969; J. Nantet, Histoire du Liban, Paris, 1963; Michal Johnson, Class and Client in Beirut: The Sunni Muslim Community 1840-1985, London, 1986; Francis Griblat, La Communauté Libanaise et le Mouvement National Palestinien 1967-1986, Paris, 1988; Jonathan C. Randal, Going all the Way: Christian War lords Israeli Adventures, and the War in Lebanon, New York, 1992. Нитре Кальвокорреси, Мировая политика после 1945 года, Книга 1, М., 2000.

¹⁵ Pierre Gemayel, Connaissance des Kataeb, Beyrouth, 1960.

¹⁶ Kamal Jounblatt, Pour le Liban, Editions Stock, 1978; Kamal Jounblatt, Démocratie Nouvelle, Beyrouth, 1987.

¹⁷ Կամալ Ջունբլատ, حقیقة الثورة اللبنانية, بیروت, ۱۹۸۸.

մեկագորությունները, որոնցում հեղինակներն իրենց գնահատականներն են տալիս Մերձավոր Արևելքում և Լիբանանում ուսումնասիրվող ժամանակահատվածում տեղի ունեցած քաղաքական դեպքերին: Հիշարժան են նաև արաբ պատմաբանների՝ արաբա-խորալեյան հավանարտությանը, Լիբանանի և արաբական այլ երկրների քաղաքական և տնտեսական հարաբերություններին նվիրված հետազոտությունները: Հարկ է նշել Ֆ.Աջամիի, Հ.Բարաբարի, Ա.Ազմեհի¹⁸, Զ.Սալիբիի¹⁹, Մ.Իբրահիմի²⁰, Բ.Քորամիի և Ա.Գետյուկիի²¹, Ա.Բադրիի²², Ա.Իսմայիլի²³, Ռ.Ռազակի²⁴, Ի.Աբուշուխի²⁵, Է.Թումայի²⁶ և այլոց աշխատությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քաղկեցած է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության բեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված գրականության և աղբյուրների համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

Ատենախոսության ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ՄՈՑԻՍԼ-ՏՆՏԵՄԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ 1958-1975թթ.», անդրադառնում է Լիբանանի տնտեսության ընդհանուր բնութագրի, նրա առանձին ոլորտների, Լիբանանում առկա սոցիալական իրավիճակի և տնտեսության զարգացման ծրագրերի ուսումնասիրությանը:

Գլխի առաջին ենթաբաժնում՝ «Լիբանանի տնտեսության ընդհանուր բնութագիրը», ներկայացվում է Լիբանանի տնտեսության ընդհանուր իրավիճակն ու նրա առանձնահատկությունները:

¹⁷ 1884, 1887, 1897-1898, السلام المفقود بيروت.

¹⁸ Fouad Ajami, The Vanished Imam Musa al-Sadr and the Shia of Lebanon, Cornell University, 1986, Halim Barakat, Lebanon in Strife: Student Preludes to the Civil War, New York, 1977, Aziz al-Azmeh, "The progressive forces", Essays on the Crisis in Lebanon, London, 1976.

¹⁹ K. S. Salibi, Cross Roads to Civil War: Lebanon 1958-1976. London, 1976; K. S. Salibi, The Modern History of Lebanon, London, 1965; 1897, كمال الصليبي: تاريخ لبنان الحديث, بيروت.

²⁰ 1884, محسن إبراهيم، الحرب: تهيئة الحركة الوطنية اللبنانية، بيروت.

²¹ Bahgat Korany and Ali E. Hillal Dessouki, The Foreign Policies of Arab States, Cairo, 1984.

²² أثرت بدر، محاضرات في الاقتصاد اللبناني، بيروت، 1897.

²³ A. Ismail, Le Liban Histoire d'un Peuple, Beyrouth, 1965.

²⁴ الدكتور زكي رضى، لبنان و بلاد السوفييات (1897-1887)، بيروت، 1887.

²⁵ E. Abouchdid, 30 Years of Lebanon and Syria, Beirut, 1948.

²⁶ Э. Тума, Национально-освободительное движение и проблема арабского единства, М., 1977.

Լիբանանը, որը համարվում էր Մերձավոր Արևելքի ամենազարգացած տնտեսություն ունեցող երկիրը, բոլոր զարգացած արդյունաբերության պայմաններում, ուներ ընդհանուր տնտեսական զարգացման բավական լավ ցուցանիշներ: Լիբանանը զգալի եկամուտներ էր ստանում բանկային համակարգից, տարանցիկ առևտրից, որից ստացվող եկամուտը կազմում էր 35%, ինչը գրեթե հավասար էր գյուղատնտեսությունից և արդյունաբերությունից ստացվող եկամտին՝ միասին վերցված, լիբանանյան սիյուռի դրամական փոխանցումներից, զբոսաշրջիկությունից և այլ ծառայություններից, որոնք կազմում էին ազգային եկամտի 2/3-ը:

1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին Լիբանանի տնտեսությունը զարգանում էր հիմնականում ծառայությունների և բեթև արդյունաբերության ոլորտների հաշվին, որոնք երկրի տնտեսության հիմքն էին: Այս շրջանում Լիբանանի զարգացմանը նպաստեց Պարսից ծոցի նավթային երկրների տնտեսական անհախընթաց աճը, քանի որ, Լիբանանի ֆինանսաբանկային համակարգը միջոցորդի դեր էր կատարում նշված երկրների կապիտալի և արտերկրում ներդրումային հնարավորությունների միջև:

Լիբանանի, հատկապես Բեյրութի, որպես Մերձավոր Արևելքի առևտրային և ֆինանսական կենտրոնի կարևորությունը սկսեց ավելի արժեքավորվել 1950-1960-ականներին, երբ Սիբիայի և Եգիպտոսի տնտեսություններում ազգայնացման գործընթացների արդյունքում, ֆինանսական միջոցների զգալի հոսք տեղի ունեցավ դեպի Լիբանան, որտեղ գրեթե սահմանափակումներ չկային դրամական միջոցների և ապրանքների ազատ հոսքի նկատմամբ: Լիբանանի տնտեսական վերելքին մեծապես նպաստեց նաև 1950-ականներին Եգիպտոսում սկսված «տարախոսության» (xenophobia) պոռթկումը: Շատ օտարերկրյա ընկերություններ, որոնք մինչ այդ իրենց մերձավորարևելյան գործունեության համար որպես կենտրոն ընտրել էին Կահիրեն, ստիպված եղան իրենց հիմնական գրասենյակները տեղափոխել Բեյրութ, որտեղ նրանց գործունեության համար կային ավելի բարենպաստ պայմաններ:

1967թ. արաբա-խորալեյան պատերազմի հետևանքով փակվեց Սուեզի ջրանցքը, որի պատճառով էլ ավելի կարևորվեց Լիբանանի որպես տարանցիկ և վերաարտահանող երկրի դերը:

Թեև Լիբանանը Մերձավոր Արևելքի այն եզակի պետություններից է, որի ողջ տնտեսական համակարգի հիմքում դրված էր ազատ տնտեսական հարաբերությունների սկզբունքը, սակայն մասնավորապես մեծ բիզնեսի ոլորտում հաճախ գերիշխող էր կլանային համակարգը: Լիբանանը նաև ազատ արժույթային գոտի էր:

Առևտրա-ֆինանսական ազատ գործունեությունը, հյուրանոցային ցանցի և զբոսաշրջիկության զարգացումը, Լիբանանի տնտեսական աճի երաշխիքն էին, ինչը նույնիսկ ստացել էր «լիբանանյան ֆենոմեն» անվանումը:

1965-1975թթ. Լիբանանի իրական Համախառն Ներքին Արդյունքի (ՀՆԱ) աճը կազմում էր տարեկան 7%:

Գլխի երկրորդ ենթաբաժնում «Գյուղատնտեսություն», վերլուծվում է 1958-1975թթ. Լիբանանի գյուղատնտեսության ոլորտը, ագրարային հարաբերությունների բնույթը և գյուղատնտեսական արտադրանքի ծավալները:

Լիբանանի գյուղատնտեսության ոլորտում զբաղված էր երկրի աշխատուժի 30%-ը, սակայն ազգային եկամտի մեջ գյուղատնտեսության մասնաբաժինը կազմում էր 19%:

Լիբանանի ցանքատարածքները բավական սահմանափակ էին՝ տեղաբաշխված հիմնականում Բերայի հովտի հարավարևելյան մասում և ծովափնյա շրջաններում: Երկրի գյուղատնտեսությունը ինքնաբավ չէր: Այն ապահովում էր երկրի բնակչության պարենամթերքի պահանջարկի միայն 1/3-ը, մնացած 2/3-ը Լիբանանը ստիպված էր ներմուծել արտերկրից, ինչը բացասական ազդեցություն էր ունենում առևտրային հաշվեկշիռի և պարենային անվտանգության վրա:

1960-ականներիի առաջին կեսից սկսած, բանկային գործառույթյունների շնորհիվ, Լիբանանում ի հայտ եկան խոշոր գյուղատնտեսական տնտեսություններ, որոնցում հողատերը, առանց վարձակալ-ձեռներեցների միջնորդության, վարձում էր գյուղատնտեսության մեջ աշխատողներ և վճարում էր նրանց ոչ քե բնամթերքով, այլ դրամական միջոցներով: Այս տնտեսությունների դերը երկրի գյուղատնտեսության մեջ գնալով դառնում էր ավելի էական և կարևոր:

Լիբանանում մշակվող հիմնական բերքատեսակներն էին ցիտրուսները, բամբակը, խնձորը, ծխախոտը, շաքարի ճակնդեղը և բանջարեղենը:

Գլխի երրորդ ենթաբաժնում «Արդյունաբերություն», ուսումնասիրվում է Լիբանանի տնտեսության այդ ոլորտի կառուցվածքն ու առանձնահատկությունները:

Անկախության ձեռք բերումից մինչև 1970թ. ազգային եկամտի մեջ արդյունաբերության ոլորտի մասնաբաժինը 7% -ից ավելացել և կազմում էր 17%: Թեև Լիբանանի արդյունաբերության զարգացումն, այդ տարիներին արաբական այլ երկրների ցուցանիշների հետ համեմատած, կարելի էր համարել բավարար:

Լիբանանը հարուստ չէ բնական հանածոներով: Ի տարբերություն այլ արաբական երկրների, այն չունի նավթային պաշարներ:

Լիբանանում արդյունաբերական ձեռնարկությունները և ենթակառուցվածքները կենտրոնացած էին հիմնական մայրաքաղաքում: Առանցքային արտադրատեսակներն էին

սննդամթերքը, խմիչքը, տեքստիլը և հագուստը, ավելի քիչ է մետաղագործական և մեքենաշինական արտադրանքը:

Լիբանանի արդյունաբերության մեջ իր ծավալներով առանձնանում էր սննդի արդյունաբերությունը: Սննդի արդյունաբերության ձեռնարկությունները, որոնք կազմում էին երկրի արդյունաբերական ձեռնարկությունների հիմնական մասը, վերամշակում էին ինչպես տեղական, այպես էլ ներմուծվող հումք և արտադրում էին պանիր, հրուշակեղեն, շոկոլադ, շաքար, բնական յուղեր, հյութեր և այլն:

Լիբանանի ազգային արդյունաբերության զարգացման համար առաջնային կարևորություն ուներ վառելիքա-էներգետիկ համակարգի կատարելագործումը: Ինչպես արդյունաբերության, այնպես էլ էներգետիկ ոլորտում զարգացումը դանդաղ էր ընթանում, ինչը բացատրվում էր վառելիքա-էներգետիկ աղբյուրների սղությանը:

Լիբանանի արդյունաբերության կարևոր ճյուղերից էր նաև շինանյութերի արդյունաբերությունը: Շինանյութերի արդյունաբերությունը Լիբանանում ներկայացված էր հիմնականում մանր ձեռնարկություններով, որոնք արտադրում էին աղյուս, սպահաստիկ, կղմինդր և այլն:

Շինանյութերի արտադրության մեջ զգալի դեր ուներ ցեմենտի արտադրությունը: Ցեմենտի արտադրությունն ավելանում էր արագ տեմպերով, ինչը բացատրվում էր երկրում շինարարական աշխատանքների մեծ չափերով: Լիբանանը ոչ միայն լրիվ բավարարում էր ցեմենտի իր պահանջները, այլև այն արտահանում էր նաև Սաուդյան Արաբիա, Հորդանան և Մոգի այլ երկրներ:

Գլխի չորրորդ ենթաբաժնում «Արտաքին առևտուր», լուսարարվում է Լիբանանի տնտեսության այս կարևոր ոլորտն ու նրա առանձնահատկությունները:

Լիբանանին բնորոշ էր առևտրային հաշվեկշռի չափազանց մեծ դեֆիցիտը, որը պայմանավորված էր այն հանգամանքով, որ գյուղատնտեսության բնագավառի սահմանափակ հնարավորությունները Լիբանանին ստիպում էին ներմուծել բնակչության անհրաժեշտ սննդի զգալի մասը, ինչի արդյունքում մեծանում էր առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը: Հակառակ լիբանանյան իշխանությունների արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված ջանքերին, այնուամենայնիվ, նշված ոլորտը դեռ անկարող էր փոխարինել ներմուծումներին ու ձեռք բերել արտահանման իրական հնարավորություններ:

Լիբանանի տնտեսության մեջ առանցքային դեր էր կատարում ծառայությունների ոլորտը:

Առևտրի հաշվեկշռի դեֆիցիտը Լիբանանը հիմնականում փակում էր տրամադրվող ծառայությունների միջոցով՝ տարանցիկ առևտրից, ապրանքների վերաարտահանումից, զբոսաշրջիկությունից և մաքսատուրքերից ստացվող եկամուտներից և այլն:

Դեֆիցիտի ավելացման հարցում կարևոր դեր էին կատարում ներմուծման ծավալները, իսկ կրճատման հարցում՝ զուտ մասնավոր տրանսֆերտները, որոնք պայմանավորված էին արտասահմանում աշխատող լիբանանցիների դրամական փոխանցումների աճով:

Լիբանան ներմուծված ապրանքների որոշ մասը վերաարտահանվում էր հարևան երկրներ, հիմնականում Սիրիա, Հորդանան, Եգիպտոս և Ծոցի երկրներ:

Այն իրողությունը, որ Լիբանանի ներմուծումը մի քանի անգամ գերազանցում էր արտահանման չափերը, վկայում էր Լիբանանի արդյունաբերական հնարավորությունների սահմանափակ բնույթի. ինչպես նաև տնտեսական կյանքում ծառայությունների ոլորտի կորևոր դերակատարության մասին:

1960-ականներին և 1970-ականների առաջին կեսին Լիբանանը ամեն կերպ փորձում էր պահպանել տարածաշրջանում իր տարանցիկ երկրի դերը, ինչը նրան հնարավորություն էր տալիս ձեռք բերել Սերժավոր Արևելքի մյուս երկրներ ապրանքներ և ծառայություններ վերաարտահանողի նշանակություն, ինչպես նաև զարգացնել թեթև արդյունաբերության ոլորտը:

Գլխի հիմնգերքը ենթաբաժնում «Ֆինանսներ, պետական բյուջե և բանկային համակարգ, զբոսաշրջիկություն և տրանսպորտ», ներկայացվում է Լիբանանի ֆինանսական դրությունը, պետական բյուջեի կառուցվածքը, բանկային համակարգի, զբոսաշրջիկության և տրանսպորտի ոլորտները:

Լիբանանի ֆինանսական դրությունը, ինչպես և ողջ տնտեսությունը, ուղղակի կախվածություն ուներ արտաքին առևտրից և ծառայությունների ոլորտից, որոնք ֆինանսական աղբյուրների ստացման հիմնական միջոցներն էին: Առևտրաշրջանառության ցանկացած կրճատում, Բեյրութի նավահանգստում տարանցիկ առևտրային գործարքների ցանկացած նվազում, հանգեցնում էր պետական եկամուտների կրճատմանը:

Լիբանանի բյուջեի հիմնական ծախսերը կազմում էին կառավարության, ոստիկանության, դատական մարմինների, պաշտպանության, ազգային անվտանգության, կրթության և առողջապահության համակարգերի ու ազգային տնտեսության զարգացման ծրագրերի իրականացման ուղղված հատկացումները, ինչպես նաև ներքին և արտաքին պարտքերի վճարման համար նախատեսված միջոցները:

Պետական բյուջեի եկամուտների հիմնական մասը կազմված էր մաքսային և հարկային մուտքերից, որոնք կազմում էին բյուջետային եկամուտների մոտ 90%-ը:

Լիբանանում, ինչպես զարգացող գրեթե բոլոր երկրներում, անուղղակի հարկերից ստացված եկամուտները գերազանցում էին ուղղակի հարկերից ստացված եկամուտները:

Օրինակ՝ 1970թ. Լիբանանում հարկերից մուտքագրված գումարների ընդհանուր քանակի 50%-ը կազմում էին անուղղակի հարկերը և միայն 20%-ը՝ ուղղակի հարկերը:

1960-ականների երկրորդ կեսին Լիբանանում գործող բանկերի թիվը, որը հասնում էր 90-ի, սկսեց կրճատվել: Ընթանում էր բանկերի խոշորացման բնական գործընթաց, ինչը դրական նշանակություն ունեցավ երկրի համար:

Լիբանանյան ծառայությունների ոլորտում հատուկ տեղ էր զբաղեցնում զբոսաշրջիկությունը: Լիբանանի առևտրի հաշվեկշիռի դեֆիցիտի փակման գործում զգալի լուծա ուներ այս ոլորտը: 1970թ. տվյալների համաձայն, զբոսաշրջիկությունից ստացվող եկամուտը կազմում էր ազգային եկամտի 20%-ը:

Լիբանանի աշխարհագրական դիրքը բարենպաստ պայմաններ էր ստեղծում նրա տարածաշրջանային տարանցիկ երկիր, կարևոր միջազգային նավահանգիստ և օդային հաղորդակցության կենտրոն դառնալու համար:

Գլխի վեցերորդ ենթաբաժնում «Լիբանանի սոցիալական իրավիճակի ընդհանուր բնութագիրը: Առողջապահության և կրթական համակարգեր», քննարկվում են 1958-1975թթ. Լիբանանում առկա սոցիալական դժվարությունները, առողջապահության և կրթական համակարգերը և նրանցում առկա խնդիրները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Լիբանանում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող միջին տարեկան ազգային եկամուտը կազմում էր 1.300 լիբ. լիրա (մոտ 400 ԱՄՆ-ը դոլար), ինչը մեկուկես-երկու անգամ ավելի բարձր էր, քան մի շարք այլ արաբական երկրներում: Սակայն Լիբանանի համար բնորոշ էր հասարակության սոցիալական խիստ բևեռացումը: Եթե լիբանանցիների 20%-ը ուներ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող միջին եկամտից զգալի բարձր եկամուտ, ապա 80%-ի եկամուտը միջինից ցածր էր:

1960-1970-ականներին Լիբանանում ընթանում էր բավական հակասական գործընթաց: Քաղաքական անկայուն իրավիճակի, տնտեսության դանդաղ աճի պայմաններում մի կողմից սրվել էին գործազրկության, արտագաղթի, ինչպես նաև եկամուտների նոր աղբյուրների ստեղծման խնդիրները, իսկ մյուս կողմից Սիրիայից և այլ արաբական երկրներից աշխատուժի զգալի չափերի հասնող չկարգավորված ներհոսք էր նկատվում դեպի Լիբանան:

Գլխի յոթերորդ ենթաբաժնում «Տնտեսական զարգացման ծրագրեր», ուսումնասիրվում են Լիբանանի տնտեսության զարգացման չորս ծրագրերը (1953-1958թթ., 1962-1967թթ., 1967-1972թթ., 1972-1977թթ.), որոնց հիմքում ընկած էր տնտեսության ազատականացման ու ազատ տնտեսական հարաբերությունների ընդլայնման և պետության կողմից այդ հարաբերություններն օրենսդրական ճանապարհով վերահսկելու սկզբունքը: Այդ ծրագրերի հիմնական նպատակն էր նպաստել երկրի տնտեսության արագ զարգացմանը,

ՀՆԱ-ի ավելացմանը, տնտեսության տարբեր ոլորտների միջև եղած հավասարակշռության խախտման կրճատմանը, գործազրկության չափերի սահմանափակմանն ու երկրի տարբեր շրջանների միջև առկա տնտեսական անհամաչափության նվազեցմանը: Լիբանանի տնտեսական զարգացման բոլոր ծրագրերում հիմնական շեշտը դրված էր «լիբանանյան ֆենոմենի»՝ Լիբանանի, որպես ծառայությունների, զբոսաշրջիկության, բանկային գործառնությունների և առևտրային կենտրոնի ձևավորված կերպարի (image) պահպանմանը:

1960-ականների և 1970-ականների առաջին կեսին տարածաշրջանում իրավիճակի ցանկացած սրում՝ 1967թ. և 1973թ. արաբա-իսրայելյան պատերազմները, միջաբարական հակասություններում լարվածությունը, իրենց ուղղակի ազդեցությունն էին ունենում Լիբանանի ներքաղաքական կյանքում՝ աննախադեպ խորացնելով գոյություն ունեցող սոցիալական, քաղաքական և տնտեսական հակասությունները: Այս ամենը մեծապես ազդում էր երկրի տնտեսական զարգացման ընթացքի վրա, առաջ բերում բացասական հետևանքներ, որոնց արդյունքում դանդաղում էր երկրի տնտեսության զարգացումը, իսկ տնտեսական զարգացման ծրագրերը հաճախ մնում էին կիսատ և անավարտ:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ 1958-1967թ-Թ.», նվիրված է 1958թ. Լիբանանում սկսված առաջին քաղաքացիական պատերազմի բռնկման պատճառների, այդ պատերազմից հետո ստեղծված իրավիճակի, հարաբերական կայունության շրջանում (Ֆուադ Շիհաբի նախագահության և Շարլ Հելուի կառավարման առաջին տարիներին) տեղի ունեցած գործընթացների և զարգացումների լուսաբանմանը:

Գլխի առաջին ենթաբաժնում՝ «Քաղաքական ընդհանուր իրավիճակը 1958թ. քաղաքացիական պատերազմից հետո», քննության են ենթարկվում քաղաքացիական առաջին պատերազմի բռնկման պատճառները, այդ պատերազմի ընթացքն ու նրա ավարտից հետո երկրում ստեղծված ներքաղաքական իրավիճակը:

1958թ. Լիբանանը դիմավորեց ներքաղաքական լարված իրադրության մեջ, ինչը երկրի նախագահ Քամիլ Շամունի և վարչապետ Մամի ա-Սուլիի ոչ ճկուն ներքին և բացահայտ արևմտամետ արտաքին քաղաքականության հետևանք էր: Քամիլ Շամունը խախտելով 1943թ. «Ազգային Դաշինքը», որտեղ շարադրված էին միջհամայնքային հարաբերությունների և Լիբանանի արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները, հրաժարվել էր չեզոքության քաղաքականությունից և ընդունել «Էյզենհաուերի դոկտրինան», ինչը առաջացրել էր մի շարք ազդեցիկ քաղաքական և հասարակական գործիչների և Եզիպտոսի նախագահ Նասերի արաբական ազգայնական զաղափարներով ոգևորված բնակչության որոշ մասի վրդովմունքը:

1958թ. սկսված քաղաքացիական պատերազմն ուներ նաև ներքին պատճառներ, որոնք հիմնականում կապված էին Շամունի կողմից վարվող քաղաքականության հետևանքով միջհամայնքային հարաբերություններում լարվածության ուժեղացմանն ու երկրի սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու և երկրորդ անգամ նախագահի պաշտոնում վերընտրվելու նրա մտադրության հետ:

1958թ. Լիբանանում սկսված ապստամբության արդյունքում Քամիլ Շամունին չհաջողեց իրականացնել իր մտադրությունը և 1958թ. հուլիսի 31-ին Լիբանանի խորհրդարանը հանրապետության նախագահ ընտրեց Ֆուադ Շիհաբին:

Ապստամբությունը լուծեց իր առջև դրված հիմնական խնդիրները: Քամիլ Շամունը հետագվեց իշխանությունից: Նորընտիր նախագահ Ֆուադ Շիհաբը ձեռնամուխ եղավ կրոնադավանական համակարգի խախտված հավասարակշռության վերականգնմանը: Միաժամանակ արտաքին քաղաքականության ասպարեզում նա հրաժարվեց «Էյզենհաուերի դոկտրինայից» և վերադարձավ Լիբանանի համար արդեն ավանդական դարձած դրական չեզոքության քաղաքականությանը: Որպես փոխգլխունային միտումների լավագույն արտահայտությունը Ֆուադ Շիհաբի և այլ քաղաքական գործիչների կողմից հայտարարվեց «լա դալիբ ուա լա մադուր» (ոչ հաղթող և ոչ պարտվող) կարգախոսը: Այս ամենը նպաստեց արաբական երկրների հետ բնականոն հարաբերությունների վերականգնմանը:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Ֆուադ Շիհաբի նախագահության տարիներ (1958-1964թթ.): Հարաբերական կայունության շրջան», ներկայացվում է լիբանանյան կրոնական համայնքների, դրանք ներկայացնող քաղաքական ուժերի և կուսակցությունների դիրքորոշումն երկրում ընթացող քաղաքական գործընթացների նկատմամբ: Անդրադարձ է կատարվում կրոնադավանական համակարգին, քանի որ առանց Լիբանանի կառավարման հիմքում դրված այդ համակարգի դիտարկմանն անհնար է շատ քաղաքական զարգացումների ճիշտ գնահատումը: Ներկայացվում են Լիբանանում տեղի ունեցած գործընթացները, քննության է ենթարկվում նախագահի կողմից վարվող ներքին և արտաքին քաղաքականությունը:

Լիբանանը բաղկացած է մի շարք քրիստոնյա և մահմեդական համայնքներից՝ մարոնիներ, ուղղափառներ, հույն-կաթոլիկներ, կաթոլիկներ, հայ առաքելական եկեղեցու հետևորդներ, հայ-կաթոլիկներ, բողոքականներ, սուննիներ, շիաներ, դրուզներ, քրդեր և այլ համայնքներ: Բնակչության կեսից ավելին դավանում է իսլամ, իսկ մյուս կեսը՝ քրիստոնեություն: 1943թ. «Ազգային Դաշինքի» (National pact) համաձայն, որը որոշում էր Լիբանանի տարբեր կրոնական համայնքների և ազգային փոքրամասնությունների փոխհարաբերություններն, ինչպես նաև երկրի արտաքին քաղաքականությունը,

հանրապետության նախագահը պետք է լինի քրիստոնյա մարտնի, վարչապետը՝ մահմեդական սուննի, խորհրդարանի նախագահը՝ մահմեդական շիա: Այս սկզբունքը ընկած է նաև խորհրդարանում պատգամավորական տեղերի բաժանման և վարչական մարմիններում պաշտոնների նշանակման հիմքում:

Լիբանանի նախագահ Ֆուադ Շիհաբի և վարչապետ Ռաշիդ Քարամեի առջև կանգնած էին մի շարք խնդիրներ: Նախ ներքին ասպարեզում անհրաժեշտ էր վարել ճկուն և խորաբախանց քաղաքականություն, ինչը հնարավորություն կտար հավասարակշռություն պահպանել լիբանանյան բոլոր քաղաքական ուժերի և կրոնական համայնքների միջև, իսկ արտաքին ասպարեզում հավասարակշռել հարաբերությունները մի կողմից՝ արաբական աշխարհի, իսկ մյուս կողմից՝ Արևմուտքի հետ:

Նոր նախագահն իր կառավարման վեց տարիների ընթացքում պատրաստակամորեն համագործակցում էր լիբանանյան գրեթե բոլոր կրոնական, այդ թվում մահմեդական համայնքների հետ՝ առավել ակտիվորեն ընդգրկելով նրանց վարչական կառույցներում և ընդլայնելով վերջիններիս ներկայությունը երկրի կառավարման մարմիններում:

Ֆուադ Շիհաբի քաղաքական հենարանը շիհաբական «ան-Նահջ» խմբավորումն էր, որում միավորվել էին մահմեդական և քրիստոնեական այն ղեկավարները, որոնք կողմ էին Լիբանանում չափավոր բարեփոխումների իրականացմանը, դրական չեզոքության քաղաքականությանը և արաբական աշխարհի հետ հարաբերությունների սերտացմանը: Ներքաղաքական ասպարեզում «ան-Նահջը» կողմնակից էր երկրի հասարակական-քաղաքական կյանքում բանակի դերի մեծացմանը:

Ֆուադ Շիհաբի իշխանության վերջին տարիներին՝ 1962-1964թթ. շիհաբական «ան-Նահջը» աստիճանաբար անկում էր ապրում: Կրկին երկրորդական էին դարձել համազգային և առաջնահերթ՝ կլանային շահերը: Հակառակ նախագահի կողմից ձեռնարկվող բոլոր միջոցառումներին, լիբանանյան լայն հասարակության շրջանում ի հայտ էին գալիս լուրջ դժգոհություններ և անբավարարվածության դրսևորումներ: Ֆուադ Շիհաբի իշխանության նկատմամբ ձևավորվում էր ընդդիմացիոր ճակատ, որում համագործակցում էին նախկին նախագահ Քամիլ Շամունը, լիբանանյան ազդեցիկ քաղաքական գործիչներ Սաիբ Սալամը, Ռայմոն Էդդեն և մարտնի պատրիարք Մեուշին:

1964թ. Լիբանանում նախագահ ընտրվեց Շարլ Հելուն, որի քեկնածությունը պաշտպանեց լիբանանյան ազդեցիկ շրջանակների բացարձակ մեծամասնությունը: Նոր նախագահը Ֆուադ Շիհաբի քաղաքական հետևորդն էր և հակված էր շարունակել նրա կողմից վարվող քաղաքականությունը:

Գլխի կերտող ենթաբաժինը՝ «Շարլ Հելուի նախագահության առաջին տարիներ» (1964-1967թթ.): Հարաբերական կայունության շրջանի ավարտ», լուսաբանում է Շարլ Հելուի

նախագահության առաջին տարիներին Լիբանանում տեղի ունեցած գործընթացները, ներկայացվում են 1960-ականների երկրորդ կեսին արաբա-իսրայելյան հակամարտության սրման արդյունքում Լիբանանում ստեղծված անկայուն իրավիճակը:

Շարլ Հելուի նախագահության ողջ շրջանը համընկավ տարածաշրջանում նոր և լուրջ քաղաքական զարգացումների հետ:

1963թ. արաբա-իսրայելյան հարաբերությունները կտրուկ սրվեցին, ինչը կապված էր Իսրայելի Հորդանան գետի ջրերը միակողմանիորեն օգտագործելու ծրագրերի մասին արված հայտարարության հետ:

1964թ. հունվարին և ապա նույն թվականի սեպտեմբերին Եգիպտոսի նախագահ Նասերի կողմից հրավիրված արաբական երկրների 1-ին և 2-րդ գագաթնաժողովները, որոնցում իրենց մասնակցությունը բերեցին 13 արաբական պետություններ, այդ թվում նաև Լիբանանը, որոշեցին, ի պատասխան Իսրայելի քաղաքականության, ջուրն որպես զենք օգտագործել նրա դեմ պայքարում: Որոշում ընդունվեց նաև կազմավորել Միացյալ Արաբական հրամանատարություն, որն Իսրայելի կողմից վերոհիշյալ ծրագիրը ռազմական միջամտությամբ խանգարելու դեպքում պետք է դիմեր համապատասխան քայլերի: Հավանության արժանացավ նաև Հորդանան գետը խտտորելու ծրագիրը: Որոշվեց նաև Հորդանան գետի հյուսիսային վտակների՝ ալ-Հասրանիի և ալ-Բանիասի, ինչպես նաև՝ Հորդանանում Յարմուք գետի վրա կառուցել ամբարտակներ: Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան պատրաստակամություն հայտնեցին ֆինանսավորել և աջակցել աշխատանքների իրականացմանը:

1965թ. իսրայելական բանակը հարձակվեց Սիրիայում արդեն իսկ կառուցվող ջրային շինությունների վրա: Այս հարձակումներին հետևած իրադարձությունների շղթան ի վերջո հանգեցրեց 1967թ. արաբա-իսրայելյան պատերազմին:

1964թ. հունվարի և սեպտեմբերի գագաթնաժողովներում Լիբանանի կառավարությունը լուրջ մտավախություն ուներ և վարանում էր միանալ Իսրայելին դիմակայող արաբական երկրների ճակատին: Նա անհանգստանում էր, որ այդ հանգամանքը կարող էր սրել լիբանանա-իսրայելյան հարաբերությունները՝ դրանից բխող բոլոր աղետալի հետևանքներով: Նման պարագայում, օգտվելով ստեղծված առիթից, Եգիպտոսն ու Սիրիան առաջարկեցին Լիբանանում տեղակայել իրենց ռազմական ուժերը՝ Իսրայելի անսպասելի ներխուժման դեպքում Լիբանանին օժանդակություն ցույց տալու նպատակով: Սակայն, Լիբանանը կտրականապես մերժեց այս առաջարկությունը, հայտարարելով, որ միայն լիբանանյան բանակը կարող է պաշտպանել Լիբանանն ու լիբանանցիներին:

Սկսված էր արաբա-իսրայելյան հակամարտության մեջ Լիբանանի ներքաշման գործընթացը: Ակնհայտ էր, որ արաբական երկրները լուրջ մտադրություն ունեին Լիբանանը

նույնպես Իսրայելին դիմակայող արաբական երկրների ճակատում ընդգրկելու վերաբերյալ: Արաբական երկրների կողմից որոշակի ճնշման հետևանքով Լիբանանը ստիպված եղավ միանալ այդ ճակատին: Լիբանանը մտավ նաև Միացյալ Արաբական Հրամանատարության կազմի մեջ, որի նպատակն էր իսրայելյան հնարավոր հարձակումներից պաշտպանել Իսրայելին սահմանակից արաբական պետությունները՝ Եգիպտոսը, Հորդանանը, Սիրիան և Լիբանանը, պայմանով, որ եգիպտական, հորդանանյան և սիրիական ուժեր չմտցվեին Լիբանան, առանց Բեյրութի պաշտոնական խնդրանքի:

1964թ. վերջին Լիբանանի, Միացյալ Արաբական հրամանատարության կազմի մեջ մտնելու հետևանքով, երկրում կտրուկ սրվել էին մի կողմից ընդգիծադիր հակաշիաբական ճակատի և իշխանությունների՝ հիմնականում շիեաբական «ան-Նահջի», իսկ մյուս կողմից՝ լիբանանյան ծախ ուժերի և աջերի միջև հարաբերությունները:

1964թ. արաբական պետությունների վերոնշյալ գազաբաժողովներին հետևած իրադարձությունները դարձան Լիբանանում հարաբերական կայունության շրջանի ավարտի կանխանշանները, որն ընդգրկում էր Ֆուադ Շիհաբի նախագահության ողջ շրջանն ու Շարլ Հելուի նախագահության առաջին տարիները: Ոչ բարենպաստ փոփոխությունները ավելի մեծ բախտ ստացան 1967թ. արաբա-իսրայելյան 6 օրյա պատերազմից հետո, որն ուղղակիորեն չառնչվելով Լիբանանի հետ, լուրջ հետևանքներ ունեցավ վերջինիս համար:

Ատենախոսության ԵՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ 1967-1975ԹԹ.», անդրադառնում է 1967-1975թթ. մերձավորարևելյան տարածաշրջանի զարգացումների՝ 1967 և 1973 թվականների արաբա-իսրայելյան պատերազմների, ինչպես նաև՝ 1970թ. Հորդանանում «սև սեպտեմբերի» դեպքերի Լիբանանի քաղաքական կյանքում ունեցած լուրջ հետևանքներին:

Գլխի առաջին ենթաբաժնում՝ «Շարլ Հելուի նախագահության վերջին տարիներ: Պաղեստինյան գործոնը Լիբանանի ներքաղաքական կյանքում (1967-1970թթ.): 1969թ. Կահիրեի համաձայնագիր», ուսումնասիրվում է 1967 թվականից հետո Լիբանանի ներքաղաքական կյանքում պաղեստինյան գործոնի ակտիվացման գործընթացը և դրա հետևանքով երկրում առաջացած ճգնաժամային իրավիճակը:

1967թ. հունիսյան պատերազմից հետո մերձավորարևելյան քաղաքական ասպարեզում ավելի ակնհայտ է դառնում պաղեստինյան հարցի առաջնահերթ դառնալու միտումը, որը չէր կարող չանդադառնալ պաղեստինյան մեծաքանակ փախստականներ ասպատանած Լիբանանի ներքաղաքական իրադրության վրա: Այս հանգամանքը սկսեց խարխլել Լիբանանում 1958 թվականից հետո ձևավորված փխրուն հավասարակշռությունը:

1967թ. հունիսյան պատերազմից հետո Լիբանանը դարձավ Պաղեստինյան Դիմադրության շարժման (ՊԴՀ) գլխավոր կենտրոններից մեկը: Հիմնվելով Լիբանանում

հաստատված պաղեստինյան փախստականների վրա՝ ՊԴՀ-ն իր գործելակերպով նպաստեց Իսրայելի դեմ համաարաբական հակամարտության մեջ Լիբանանի ներքաշմանը: Բացի այդ, պաղեստինցիներին մեծապես աջակցում և նրանց հետ համագործակցում էին լիբանանյան ծախ ուժերը՝ Լիբանանի կոմունիստական կուսակցություն, Առաջադիմական սոցիալիստական կուսակցություն, լիբանանյան նասերականներ (մուրաբիտուններ), Արաբական վերածննդի Բաաս կուսակցության լիբանանյան մասնաճյուղ, որոնք դժգոհ էին իշխող շրջանակների և լիբանանյան աջերի՝ Լիբանանյան փաղանգներ, Ազգային լիբերալ և Ազգային դաշինք կուսակցություններ, մերձավորարևելյան հակամարտությունից Լիբանանը հնարավորինս հեռու պահելու մտադրությունից:

1960-ականների վերջին լիբանանյան քաղաքական կյանքում կենտրոնական տեղ սկսեց զբաղեցնել պաղեստինցիների և նրանց զինված խմբավորումների ներկայությունը: Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ 1968 թվականից սկսած Հարավային Լիբանանում գտնվող պաղեստինյան ռազմական ճամբարներում պատրաստվածություն անցած պաղեստինյան մարտիկները սկսեցին ակտիվ ռազմական գործողություններ իրականացնել Իսրայելի հյուսիսային բնակավայրերի վրա, ինչն առաջացարեց Իսրայելի պատասխան հարձակումները:

1960-ականների վերջին լիբանանյան իրականության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ պաղեստինյան հարցի շուրջ քաղաքական տարակարծությունը համընկնում էր երկրում սոցիալական լարվածության ուժեղացման հետ:

1969թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Լիբանանն ապրում էր ներքաղաքական լուրջ ճգնաժամ, որը պաղեստինյան զինվորական խմբավորումների և լիբանանյան աջ ուժերի միջև բախումների ուղղակի հետևանք էր: Այդ ճգնաժամը հնարավոր եղավ հաղթահարել 1969թ. նոյեմբերի 3-ին լիբանանյան կառավարության և ՊԱԿ-ի միջև ստորագրված Կահիրեի համաձայնագրով, որով ՊԴՀ-ին թույլատրվեց ռազմական ճամբարներ ունենալ Հարավային Լիբանանում, սակայն պաղեստինյան զինվորական խմբավորումները պետք է հարգեին երկրի անվտանգությունն, անկախությունն ու տարածքային ամբողջականությունը: Կահիրեի համաձայնագիրն առաջին համաձայնագիրն էր, որ ստորագրվեց որևէ արաբական պետության՝ տվյալ դեպքում Լիբանանի և ՊԱԿ-ի միջև, որում ՊԱԿ-ը հանդես էր գալիս որպես բանակցությունների լիիրավ կողմ:

1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին Լիբանանում տեղի ունեցան մի շարք իրադարձություններ՝ լիբանանյան աջերի և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև պարբերական դարձած բախումները, Լիբանանի տարածքից Իսրայելի հյուսիսային բնակավայրերի վրա պաղեստինցիների հարձակումները, դրանց հաջորդած Իսրայելի պատասխան գործողությունները, նպաստեցին, որ Լիբանանը, մինչ

այդ չտեսնված մասշտաբներով, ներքաշվեր արաբա-խորալեյան հակամարտության մեջ, ինչն իր հերթին ապակայունացրեց Լիբանանի առանց այդ էլ բարդ ներքաղաքական իրավիճակը:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Պաղեստինյան ռազմա-քաղաքական ներկայությունը որպես լիբանանյան հասարակության երկփեղկման և լիբանանյան ճգնաժամի խորացման հիմնական պատճառ (1970-1973թթ.)», ներկայացվում է Լիբանանում 1970-1973թթ. տարածաշրջանային գործոններով պայմանավորված զարգացումները, և դրանց հետևանքով լիբանանյան հասարակության երկփեղկման խորացումն ու լիբանանյան ճգնաժամի սրումը:

1970թ. սեպտեմբերին Հորդանանում հորդանանյան բանակի և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև տեղի ունեցած բախումներից հետո, ՊԱԿ-ը Յասիր Արաֆաթի գլխավորությամբ, իր ղեկավար մարմիններով և ռազմական կազմակերպություններով ու զինվորական խմբավորումներով հաստատվեց Լիբանանում:

1970-1972թթ. Լիբանանին բնորոշ ներքաղաքական լարված իրավիճակը, սոցիալական, տնտեսական և քաղաքական ճգնաժամի սրումը զուգորդվում էր պաղեստինյան ներկայության նկատմամբ լիբանանյան հասարակության տարբեր հատվածների իրարմերժ դիրքորոշմամբ: Ներքաղաքական լարվածությունն էլ ավելի էր սրվում Լիբանանի տարածքում Իսրայելի պարբերական հարձակումների հետևանքով: Որոշակի շփումներ էին նկատվում լիբանանյան աջերի և Իսրայելի միջև, միաժամանակ ամրապնդվում էր պաղեստինցիների և լիբանանյան ձախերի միջև համագործակցությունը:

Գլխի երրորդ ենթաբաժնում՝ «Լիբանանը 1975թ. սկսված քաղաքացիական պատերազմի նախօրեին (1973-1975թթ.)», անդրադառնում է մերձավորարևելյան հակամարտության հետևանքով Լիբանանում ներքաղաքական ճգնաժամի սրմանը, նրա մերձավորարևելյան հակամարտության մեջ ներքաշմանն ու 1975թ. սկսված երկրորդ քաղաքացիական պատերազմի բռնկման պատճառների խորացմանը:

1973թ. հոկտեմբերի արաբա-խորալեյան շրջրորդ պատերազմը, կրկին անգամ անմիջականորեն չառնչվելով Լիբանանի հետ, լուրջ հետևանքներ ունեցավ նրա համար: Այդ պատերազմից հետո լիբանանյան ձախ ուժերի և պաղեստինյան զինվորական խմբավորումների միջև համագործակցությունն ու փոխաջակցությունն ավելի ամրապնդվեց:

Լիբանանյան աջերը, հասկանալով 1973թ. արաբա-խորալեյան պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված նոր իրավիճակի կարևորությունը և պաղեստինյան գործոնի դերի մեծացումը, փորձում էին ցույց տալ, որ Լիբանանը արաբական աշխարհի և համասարաբական քաղաքականության բաղկացուցիչ մասն էր, իսկ լիբանանյան իշխանություններին և, մասնավորապես, լիբանանյան աջերին չպետք է մեղադրել բացառապես արևմտամետ կողմնորոշման և Իսրայելի հետ համագործակցության եզրեր

փնտրելու մեջ: 1974թ. հոկտեմբերին Ռաբաբում, արաբական պետությունների գագաթաժողովում, արաբական երկրների կողմից ՊԱԿ-ի, որպես Պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցչի ճանաչումից հետո, լիբանանյան աջերը ձգտում էին հնարավորինս կարգավորել ՊԱԿ-ի հետ իրենց հարաբերությունները, և այդ ճանապարհով հարթել Լիբանանում ստեղծված ճգնաժամային իրավիճակը: Այդ էր վկայում այն փաստը, որ 1974թ. սեպտեմբերին «Քաբաիթ» կուսակցության ղեկավար Պիեր ժմայելը ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթի և «Նաթհ»-ի որոշ ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում բազմիցս նշեց, որ լիբանանցիներն, ընդհանրապես, և «Քաբաիթ» կուսակցությունը, մասնավորապես, կատարեն պաղեստինցիների օրինական գործողությունները, եթե դրանք չվտանգեն արաբական որևէ պետության անվտանգությունը: Սակայն այդ հանդիպումները դրական արդյունք չտվեցին:

1973-1975թթ. Լիբանանում, փաստորեն, իր արտացոլումն էր գտնում մերձավորարևելյան հակամարտության ցանկացած ելևէջ՝ զուգորդվելով ներլիբանանյան զարգացումներով՝ բախումներից մինչև ներքաղաքական ճգնաժամեր և կառավարությունների փոփոխություններ: Անկայուն իրավիճակն երկրում գնալով խորանում էր:

Այս շրջանում Լիբանանում ներքաղաքական իրավիճակի սրումը ուղեկցվում էր սոցիալական ճգնաժամի խորացման հետ: Լիբանանյան ձախերը պահանջում էին երկրում իրականացնել սոցիալական, տնտեսական և քաղաքական որոշակի բարեփոխումներ, մասնավորապես, վերանայել 1943թ. «Ազգային Դաշինքն» ու երկրի սահմանադրությունը, խորհրդարանում պաղգամավորների ընտրության՝ և պետական պաշտոնյաների նշանակման հարցում հրաժարվել կրոնադավանական սկզբունքից և երկրի կառավարման գործում ընդլայնել մահմեդական բնակչության մասնակցությունը:

Այն, որ կրոնադավանական համակարգը 1970-ականներին ճգնաժամ էր ապրում, գիտակցում էին նաև իշխող շրջանակներն ու լիբանանյան աջերը, որոնք, սակայն, այդ համակարգի ցանկացած վերանայում դիտում էին որպես սեփական դիրքերի բուլցամանն ուղղված փորձ: Ուստի, լիբանանյան աջերը հակված չէին որևէ փոխզիջման:

1970-ականների սկզբին Լիբանանում պետական համակարգը՝ կառավարությունը, խորհրդարանն ու բանակը, փոստորեն, կորցրել էին իրենց իրական իշխանությունը և չէին վերահսկում երկրում տիրող իրավիճակը: Կոռուպցիան, քաղաքական գործընթացներում զինված խմբավորումների գնալով ակտիվացող դերը, պետական մարմինների անդամալույծ լինելու փաստերը, հանգեցրեցին բացահայտ քրեական տարրերի ակտիվացմանը:

1975թ. սկզբին Լիբանանը կանգնած էր քաղաքացիական պատերազմի շեմին և իրադարձություններն էլ զարգանում էին ոչ ի օգուտ Լիբանանում իրավիճակի կայունացման:

Լիբանանյան հակադիր ճակատների միջև հակասությունների երկարատև զինված հակամարտության վերաճելու սպառնալիքի պայմաններում, լիբանանյան աջերը որևէ կերպ չէին ցանկանում փոխզիջման գնալ և որոշակի բարեփոխումներ իրականացնել կրոնադավանական համակարգում: Այդ փուլում բարեփոխումների իրականացումը կհամապատասխաներ նաև աջ ուժերի շահերին, քանի որ երկրում իրավիճակի վատթարացումն ամենից առավել կխարխլեր հենց նրանց՝ մասնավարապես մարոնիների տիրապետող դիրքերը:

1970-ականներին մերձավորարևելյան ճգնաժամի սրման, Լիբանանում պաղեստինյան ռազմա-քաղաքական կառույցների ներկայության, պաղեստինցիների՝ լուրջ քաղաքական գործոն դառնալու և արտաքին մի շարք այլ գործոնների ազդեցությամբ, աննախադեպ խորացան հակասությունները լիբանանյան հասարակության ներսում: Նրա պառակտումը դարձավ իրողություն: Այս բոլորի հետևանքով 1975թ. ապրիլին Լիբանանում սկսվեց երկարատև քաղաքացիական պատերազմ:

ՎԵՐՁԱԲԱՆՈՒՄ անփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, առենախոսը եզրակացնում է, որ 1960-ականների երկրորդ կեսին և 1970-ականների սկզբին լիբանանյան ճգնաժամի խորցումը զանազան ներքին և արտաքին գործոնների հետևանք էր: Ներքին գործոններից հարկ է նշել. 1. Կրոնադավանական համակարգի ճգնաժամը: Այդ համակարգը կարիք ուներ զգալի բարեփոխումների, որին կտրակասապես դեմ էին լիբանանյան աջ ուժերը, մասնավորապես մարոնիները, որոնք չէին ցանկանում կորցնել այդ համակարգով ամրագրված իրենց վերադաս դիրքերը: 2. Ուսումնասիրվող շրջանում Լիբանանում խիստ սրվեց սոցիալ-տնտեսական իրավիճակը, ուժեղացավ տարբեր կյանների գործունեությունն ու իշխող շրջանակներում առկա կոռուպցիան: 3. Ներքաղաքական անկայունությանը նպաստեց նաև Լիբանանում Պաղեստինյան Գիմաղության շարժման ջոկատների և մեծաքանակ պաղեստինյան փախստականների ներկայությունը, որի նկատմամբ վերաբերմունքը ջրբաժան գիծ դարձավ լիբանանյան տարբեր քաղաքական ուժերի միջև՝ հանդիսանալով ներքաղաքական իրավիճակի սրման և լիբանանյան հակամարտության խորացման հիմնական գործոններից մեկը: 4. Լիբանանյան հասարակության որոշ շրջանակներ խիստ դժգոհ էին երկրի իշխանությունների արտաքին քաղաքականությունից: Այդ տարիներին տարածաշրջանային լուրջ զարգացումների համատեքստում հաճախ շատ դժվար էր պահպանել Լիբանանի արտաքին քաղաքականության դրական չեզոքության ավանդական սկզբունքը, ինչը դառնում էր զանազան շահարկումների առարկա:

Ահա այսպիսի տարրերից միահյուսվեց լիբանանյան հակամարտության աննախադեպ խորացմանը նպաստած ներքին հակասությունների բարդ հանգույցը:

Վերոնշյալ գործոնները հանգեցրել էին լիբանանյան պետական կառավարման մարմինների գրեթե բացահայտ անդամալուծմանը, որի հետևանքով արտաքին գործոնները՝ պայմանավորված ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գլխավորած խմբավորումների ու նրանց մերձավորարևելյան դաշնակիցների միջև դիմակայության ու հակամարտության խորացմամբ, անմիջականորեն անդրադառնում էին ներլիբանանյան իրականության վրա, ավելի բարդացնելով ճգնաժամի քաղաքական կարգավորման խնդիրը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՎԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Լիբանանի կրոնադավանական համակարգը, Երիտասարդ արևելագետների XXII գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2000, էջ 20-21:
2. Պաղեստինյան գործոնը Լիբանանի ներքաղաքական կյանքում (1970-1980-ական թվականներ), Երևան Վ. Բոյոտովի անվան օտար լեզուների համալսարան, Երևան, 2000, էջ 46-47:
3. Լիբանանի կրոնադավանական համակարգը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XIX, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան 2000, էջ 88-95:
4. Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանանյան ճգնաժամում (1970-1990-ական թվականներ), Երիտասարդ արևելագետների XXII գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2001, էջ 25-26:
5. Պաղեստինյան ռազմա-քաղաքական կառույցները Լիբանանում (1958-1975թթ.), Երիտասարդ արևելագետների XXIII գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2002, էջ 26-28:
6. Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանանյան ճգնաժամում (1970-1990-ական թվականներ), Արևելք (հոդվածների ժողովածու), Երևան, 2001, էջ 76-85:
7. Պաղեստինյան ռազմա-քաղաքական կառույցները Լիբանանում (1958-1975թթ.), Արևելք (հոդվածների ժողովածու), Երևան, 2002, էջ 78-88:

АРУТЮНЯН ЛИЛИТ МИШАЕВНА
ЛИВАН МЕЖДУ ДВУМЯ ГРАЖДАНСКИМИ ВОЙНАМИ
(1958-1975гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.02 – “Всеобщая история”

Защита состоится 20-го декабря 2002г. По адресу: 375019, г. Ереван,
просп. Маршала Баграмяна 24г., Институт Востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Исследование политического и социально-экономического развития Ливана в 1958-75 гг. имеет не только важное научное, но и политическое и практическое значение.

Этот противоречивый период новейшей истории Ливана был ознаменован с одной стороны общим социально-экономическим прогрессом, сравнительной стабильностью политической ситуации, а с другой стороны созданием предпосылок для возникновения в 1975 г. второй гражданской войны. Вместе с тем, все более глубокий след во внутриполитической жизни оставляли региональные события, которые во второй половине 1960-х гг. и в течение 1970-х гг. во многих случаях приобретали без преувеличения международное значение, такие как арабо-израильские войны 1967 и 1973 гг., возникший вследствие арабо-израильской войны 1973 г. всемирный энергетический кризис, постепенное повышение роли палестинского фактора в ближневосточном конфликте и др.

Изучение внутриливанских и региональных, иногда даже международных событий в изучаемый период актуально, не только для исследования указанного периода истории Ливана, а также для понимания истории и развития современного Ливана, но и с точки зрения более глубокой и полной оценки региональных процессов.

Историю Ливана, происходящие в нем процессы трудно осмыслить без рассмотрения часто отрицательной, но иногда важной регулирующей роли этно-конфессиональной системы, которая составляет основу управления страны.

Изучение истории Ливана 1958-75 гг. ясно указывает на то, что попытки преодоления внутриливанского конфликта предпринимаются не только узкообщинными, но чаще всего общеливанскими силами. Ярким примером тому может служить практика образования самых разных и часто невероятных политических союзов и сотрудничество руководящих кругов самых разных религиозных общин.

Научное исследование данной темы является содействием в создании полного и всеобъемлющего представления о некоторых аспектах ближневосточного конфликта и в оказании помощи для более правильного понимания противоречий, возникающих вследствие углубления конфликта в странах Ближнего Востока, в данном случае в Ливане.

Вопрос актуальности данной темы непосредственно связан с важностью исследования ключевых проблем новейшей истории, внутренней и внешней политики и экономического развития Республики Ливан - важного внешнеполитического партнера Республики Армения.

В первой главе диссертации (“Социально-экономическое положение в Ливане в 1958-1975гг.”) исследуются вопросы общей характеристики экономики Ливана, ее отдельных областей, имеющегося в Ливане социального положения и программ экономического развития страны.

Вторая глава диссертации (“Внутриполитическое положение в Ливане в 1958-1975гг.”) посвящена изучению общей ситуации в Ливане создавшейся после первой гражданской войны в 1958г., периода относительной стабильности (президентства Фуада Шихаба и первых лет правления Шарля Хелу), а также происходивших в 1958-1967гг. в Ливане и регионе процессов и развития.

В третьей главе диссертации (“Палестинские военно-политические структуры в Ливане в 1967-1975гг.”) освещаются ближневосточные региональные процессы во время всего этого периода: арабо-израильские войны 1967г. и 1973г., а также события “черного сентября” в Иордании и вследствие этого создавшаяся в Ливане напряженная внутриполитическая ситуация.

На основании проведенного исследования в заключении диссертации делаются выводы по основным рассмотренным вопросам, показано их значение для современной исторической науки.

Работа может способствовать освещению проблем политического развития в Ливане и в целом в странах Ближнего и Среднего Востока, основных вопросов политической истории данного периода, а также может быть использована в политологических исследованиях и при разработке аналитических материалов для государственных органов и внешнеполитического курса Республики Армения в отношении Ливана, стран и политических процессов ближневосточного региона.

LILIT M. HARUTUNYAN

LEBANON BETWEEN TWO CIVIL WARS (1958-1975)

